

Տրապիղոնցի, որոնք իբր հինգ տարի յառաջ¹² հասած էին հոն եւ կը փնտոէին անդորր անկիւն մը նուիրուելու ճգնաւորական կեանքի: Ծանօթանալով անոնց ղիտաւորութեան Մովսէս, խորհուրդ կու տայ որ փոխանակ այս տեղ, օտարութեան մէջ իրենց ճգնարան փնտոելու, երթան Սիւնեաց աշխարհը, ուր պիտի գտնեն այս նպատակի համար շատ յարմար միջավայր մը. «գայդպիսի տեղի, զոր խնդրէք յարեւելեան յաշխարհին բազումք գոն, եւ մանաւանդ յերկրին Սիւնեաց, որոց ես ականատես իսկ եմ, եւ յաշխարհին յայնմիկ կարի առաւել պատշաճ է շինել զանապատ, զի բուն Հայաստան է, վանօրայք եւ զեղօրայք եւ ժողովուրդք քրիստոնէից բազումք գոն, ուստի ամենայն պիտոյք անպատին լցեալ լինին: Այլ եւ ինքն տէր Մովսէս յանձն էառ, զի յորժամ նոքա ժամանեալ յերկիրն յայն եւ ուրեք անդորրացեալ զետեղիցին, ուր եւ իցէ ինքն տէր Մովսէս՝ թողեալ զամենայն՝ անդր առ նոսա ժամանեացէ եւ ընդ նոսին բնակեսցի միաբանութեամբ: Արդ այսպիսի յորդորական բանիւ զնոսա առաքեաց ի վերին աշխարհն արեւելից, ինքն մնաց յերուսաղէմ» (Դաւր. 286):

¹² Գր. Դարանաղցի, որ պատահած էր ճգնաւորներու 1606ին Երուսաղէմ, կը գրէ (էջ 103) թէ արդէն այն ժամանակ յայտնած էր Տէր Կիրակոս միտքը, թէ «ես ի մեր Հայոց երկիրն եւ յազգին մերձ կու գնամ յիշխանութիւնն թագաւորին Պարսից հայասիրին»: